ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2014 թվականի N 23 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին>> թիվ 134-Ն որոշման և <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլան>>-ի իմ ղեկավարությամբ Տավուշի մարզում 2014թ. ապրիլի 18-ին անցկացվելու է <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն):

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Վաղինակ Հովսեփյանին,
2. Ուսումնավարժությանը ընդգրկել՝
   1) ՀՀ Տավուշի մարզպետարանը,
   2)ՀՀ Տավուշի մարզի ԱԻ և տարահանման հանձնաժողովները,
   3) Նոյեմբերյան, Կողբ, Ջուջևան համայնքների ղեկավարներին:
3. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Վ. Հովսեփյանին՝
   1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել ապրիլի 14–ին:

4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ Լ. Սարգսյանին՝

1) ստուգել տարահանման հանձնաժողովի ընդունման և տեղաբախշման կետերի պատրաստությունը: Ճշտել տարահանման և տեղաբախշման համար օգտագործվող տրանսպորտի քանակը, տարահանվող բնակչության հաշվարկը ըստ բնակավայրի տեղաբախշման,

2) ճշգրտել << ՀՀ Տավուշի մարզի տարահանման պլան>>-ը,

3) ճշգրտել <<Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Տավուշի մարզի գործողությունների պլան>>-ը:

5. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել առնչվող պլաններն ու փաստաթղթերը,

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին,

6. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2014թ. փետրվարի 19
ք. Իջևան